

# Այսպէս Ալ Կ'ըլլայ, Այնպէս Ալ հեղինակ՝ Երուանդ Կոպէլեան

Սուլեյով՝ զիս կը հալածէր:

Ես իրմէ չէի վախնար: «Մի՛ ըներ, մի՛ ըլլար», ալ չըսի: Յետոյ, ինչո՞ւ վախնայի: Ապտակ մը որ գարնէի, կէսը պարապը կ'երթար: Բայց այդ ալ չէի կրնար: Կը նայիք՝ կ'ելլէր, կը տնկուէր գլխիվայր, գլխուս փորձանք կ'ըլլար: Մայրը կու գար իր գաւակը կ'ուզէր, մայրս բռնէր անոր տեղ զիս տար՝ չէր ըլլար, կնիկը զիս առնէր՝ ի՞նչ ըներ: Ելլես երկու խօսք ըսես տղուն չ'ըլլար, «սուլեյը արգիլող օրէնք մը ցոյց տուր» պիտի ըսէր. առնես քալես՝ տեսակ մը, հինգ քայլ ետեւէդ է միշտ, կը սուլէ շարունակ, անճոռնի կերպով, իսկնո՞ւ մենթ, իսկըին փշածին պէս, սկսածը կէս կը ձգէ՝ ուրիշ մը կը սկսի, թանկօն վալսի կը դարձնէ, դասական եղանակ մը կը սկսի՝ շան կաղկանձումի, շնագայլի ոռնոցի կը վերածէ, ելլես գլխուն բան մը գարնես, ըսի՝ վրան հոգի չկայ, քեզ կ'ամօթեն, իսկնո՞ւ է կ'ըսեն թերեւս, սուլելէն ի՞նչ կ'ելլէ որ, բռնեց տղուն զարկաւ...:

Դիմացի մայրը անցայ: Ետեւս է սրիկան: Ձեռքերը գրպաններուն մէջ, վրան գլուխը անխնամ, ետեւս է, կը սուլէ, ամենաբարձր ձայնով, ամենաանճոռնի կերպով, ֆիլմի եղանակ մը, որ վերջերս մարիկ մարիկ բերած է ամբողջ ժողովուրդը՝ զբօսարաններու, ճաշարաններու, սրճարաններու, խանութներու ձայնասփիւռէն եւ շրջուն նուագաձուներու ջութակներէն ու զուռնաներէն:

— Ծօ՛, ըսի մտքես, սրիկա՛յ, այս բանը կ'ընես դուն ինծի, չէ՞: Քու խերդ անիծել՝ իմ ճիտիս պարտքն ըլլայ: Պիտի չմոռնամ ասիկա, խերդ պիտի անիծեմ եթէ մուրփ փողոց մը մտնենք:

Գիշեր էր: Ժամը երեքը կ'անցնէր: Մութ փողոցի մը վարի ծայրէն յայտնուեցաւ այդ անպիտանը: Տասներեք տասնըչորս տարում մը կար: Չէի ճանչնար զինքը, ուրիշ ատեն տեսած ալ չէի, բայց կ'ենթադրէի որ կա՛մ խաւաքարտէ տուփեր շինող է, կամ տունէն փախած մը: Ինչո՞ւ անպայման խաւաքարտէ տուփեր շինող. չեմ գիտեր, սակայն ինծի այդպէս կու գար:

Թեթեւ անձրեւ մը սկսաւ: Քայլերս արագացուցի: Ան ալ սկսեր էր թրջիլ: Արագացուց քայլերը:

Մեր երկուքին միջեւ միջոցը կը մնար նոյնը: Կը շարունակէր սուլել: Վերջացուցածը անգամ մըն ալ կը սկսէր, յետոյ՝ անգամ մըն ալ, անգամ մըն ալ:

Իմ սիրտս նեղ էր: Բարկութենէն ինքզինքս կ'ուտէի: Հակառակ այն անպատեհութիւններուն, որոնց գիտակցութիւնն ունէի, դարձեալ դժուարաւ կը զսպէի ինքզինքս, յանկարծ չդառնալու եւ երկու խօսք չընելու համար: Թերեւս ինքն ալ կը փնտռէր այդ: Երբեմն շունը կու գայ փայտին կը քսուի, ծեծ կը փնտռէ կ'ըսեն: Սակայն, եթէ այդպէս ըլլար, կու գար, ուղղակի կը հայհոյէր ինծի, բան մը կ'ընէր, ոտքիս վրայ կը կռիւէր, կը զարնուէր, ի՞նչ գիտնամ, վերջապէս բաներ մը կ'ընէր իր փնտռածը գտնելու համար:

Երբեմն կը խորհէի, որ սուլելը երբեք մեծ փնտռել չէ: Սակայն ի՞նչ կ'ուզէր ան ինձմէ, որ այդքան անճոռնի կերպով սուլելով, գիշերուան այդ ժամուն, ետեւէս էր ինկէր:

— Կ'երեւի, ըսի, սիրտս նեղ է եւ ինծի այդպէս կու գայ. ի՞նչ կ'ելլէ սուլելէն: Թող երթայ սուլէ:

Անձրելը կը սպառնար սաստկանալ: Քայլերս ա՛լ աւելի արագացուցի: Ան միջոցը կը պահէր խենթեցնող յամառութեամբ մը: Սկսայ վազել, ոտնաձայնը ետեւս էր: Կեցայ շէնքի մը դրան մէջ. եկաւ կեցաւ քովս՝ սոյլը բերանը: Փախայ: Ինքն ալ բաժնուեցաւ այդ տեղէն սկսաւ ետեւէս վազել:

Դիմաց անցայ: Աչքիս ծայրով ալ ետ՝ իրեն կը նայէի: Կը պատրաստուէր դիմաց անցնիլ, երբ յանկարծ ինքնաշարժ մը եկաւ:

Կրնար տակը մնալ: Չմնաց: Կեցաւ: Երկուքն ալ նոյնն էին ինծի համար: Կարելորը իմ փրկութիւնս էր եւ այդ կ'իրականանար:

Շունչ մը առի՛ երկար, ծանր բեռէ մը ազատող մարդոց պէս: Հիմա կրնայի մտածել, հաշուել, ծրագրել, երեւակայել, ի՞նչ գիտնամ, ճամբայ ելլելու ատեն այնքա՛ն բաներ կային մտքիս մէջ՝ խառն ի խուռն, իրար անցած: Կը մտածէի ճամբու ընթացքին դասաւորել զանոնք, բոլոր աննպաստ բաները լաւատեսօրէն վերլուծել, քիչ մը թէթեւնալ, հանգստանալ, ձեւի մը բերել ամէն բան, կարգի մը դնել մտքիս մէջ, ետ առաջ, ամէն բան իր տեղը դնել, առնել քալելիքը<sup>[1]</sup>՝ պահել, նետելիքը նետել, մաքրագործում մը ընել:

Յանկացծ սուլեց ականջիս տակ եւ տեղէս վեր ցատկեցի: Ինքնաշարժը անցնելէ վերջ հասեր էր ետեւէս:

Ամէն բան իրար անցաւ կրկին, առնելիք տալիք, պահելիք նետելիք իրար խառնուեցան:

Շուրջս նայեցայ, փողոցին մէջէն գիշերապահ մը կ'ելլէր դէպի մայր պողոտայ: Սկսայ վազել: Մարդը զարմանքով եւ կասկածով ինծի նայեցաւ: Հարկ տեսայ իրեն ըսելու, որ անձրելը պիտի սաստկանայ եւ պէտք է աճապարել:

Իրաւունք տուաւ ինծի ու դիմաց անցաւ:

Անձրեւը կը սկսէր իսկապէս սաստկանալ: Վազքս արագացուցի: Երկար ժամանակ վազեցի ու վերջապէս հասայ մեր փողոցին անկիւնը:

Կեցայ: Տղան ալ եկաւ, քովս կեցաւ: Տակաւին կը սուլէր: Ինքզինքս փողոցէն ներս նետեցի՝ որպէս վերջին ապաստան: Սուլելով ետեւէս խոյացաւ:

Տուն հասայ, դուռը բացի, ներս մտայ: Ան կը սուլէր տակաւին: Նկատեցի, որ ձայնը կը մնար՝ առանց հեռանալու: Դրան վրայի պատուհանը բացի եւ կամացուկ մը նայեցայ:

Անձրեւը սաստկացեր էր եւ ան մեր դուռն էր ապաստաներ:

Չեմ գիտեր թէ ի՞նչպէս քնացայ եւ ի՞նչ երագ տեսայ այդ գիշեր: Սակայն, երբ ես ինծի մնացի, մտածումներս դասաւորեցի, տրամադրութիւնս լաւացաւ եւ զարմացայ, թէ ինչո՞ւ այդքան նեղուեր էի բանի մը, այնքան հասարակ բանի մը, որ կը կայանար պարզապէս գործէն վերադարձող տղու մը սուլելով երթալուն մէջ:

Ես կրնայի այլ կերպ ալ շարժիլ: Դո՛ւք ալ կրնայիք ընել այն, ինչ որ ես ըրի կամ պիտի ընէի: Ոչ ըսողը կը ստէ: Եւ ես, կ'ըսեմ, որ ուրիշ օրեր անցած եմ անկէ, իմ կարգիս՝ սուլելով, մինչեւ տուն եւ երբեք չեմ մտածած մէկը նեղած ըլլալու մասին: Արդէն, սուլելէն ի՞նչ կ'ելլէ որ...

«Չէ՛», մի՛ ըսկէք: Ձեզմէ որեւէ մէկը կրնար ընել այն ինչ որ ես ըրի, կրնար ընել նաեւ այն ինչ որ կը մտածէի ընել եւ չըրի, ըրած էր այն, ինչ որ ես ալ ըրի ուրիշ ատեն...:

Եւ սակայն, ես պատմեցի, դուք թերեւս մէկուն բան մը չըսիք:

*Մարմարա*

30.03.1955

- ↑ առնել քալելիք — գործածելիք: